

20140

Հ. Ա. Խ. Հ.

ՊՐՈՎԵՏԱՐՆԵՐ ԲՈԼԱԲ ԵՐԿՐՄԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

ԼՈՒՍԱԽՈՐԾՎԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՆ ԿՈՄԻՍԱԳՐԻՑ

Սոցիալական դանտիարակութեան զիստու վարչութեան  
ակադեմիական սեկցիա

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄՐԱԳԻՔ  
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻՔ

ԱԹԱՋԻՆ ԱՄՑԻՇՎՆԻ ԱՌԱՅՈՒԹԻ ԿՐԹՈՅԻ

- 2) ՀՅԱՅԹԵԼԱՐՔՅԱՅ
- 3) ՀՅԱՅԹԵԼԱՐՔՅԱՅ - ԹԵ.
- 4) ՀՅԱՅԹԵԼԱՐՔՅԱՅ - ԹԵ.
- 5) ՀՅԱՅԹԵԼԱՐՔՅԱՅ .

Է ՀԱՅԻ Ա. Մ. Ի. Ե.

ՅԱՅՐԱՆ ԳԻՏԵԿԱՆ ԲՆԱՑՔԱՆԵՐ

1921

372

0-88



Հ. Ա. Խ. Հ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԷՐ

ԼՈՒՍԱԿԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱԾ

Սոցիալական դաստիարակութեան զիստուր վարչութեան  
ակադեմիական սեկցիա

372

0-88

այ

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ**

**ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԿԻ**

ԱԹԵՇԻ ԱՍՏԻՇԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔՊՐԱՅԻ

..... Եղիշե  
1922.  
2002

ԵԶՄԻԱԾԻՆ

ՅԱՐԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՍՏԻՏԱՏԻ

1921

3. 7. 10. 10. 10-11. 12-13.

Հունարկութեր	մասն. բաժ.	I.	II.	III.	IV.	V.
Թղթապատճենագիրներ	-	3	4	5	6	7(8)
Ռուսակառքի զարդար	-	4	5	5	5	4
Կայուց լեզու	+	6	6	6	5	5
Արարութեան					2	4
Պուստ լեզու	-	-	-	4	4	4
Հերու եւստ Երգ. նչարչ. ջեռար.	-	3	3	3	3	3
Փեղլիք. Կառափարի.	-	2	2	2	2	2
	15	18	20	25	27	29



62294 Ա.2-

574

## ԾՐԱԳԻՐ ՅԱՅՈՂ ԼԵԶՈՒ

Հ. Պ. Հ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԱՅՆԱԿԱՆ ԱՅԽԱՑ. ԴՊԲԱՑԻ

### 1. ՔԵԴԱՅԱՅԻՐ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Առաջն ուսափանի գպրոցում մայրենի լեզուի ուսում-ուսափրութիւնը ներկայանում է որպէս բնական միջոց ուսումնակրելու և ձմռաշելու շրջապատող կեանքն ու բնութիւնը, ուստի նույն չպէտք է ինքնամփոփ բնոյթ կրի, այլ պիտի օրգանապէս կապւի բնութեան և կեանքի հետ լրանկածլաբախզի բաժնում և գպրոցի առաջն խմբաւոր-ումն (կմնացենարում) մէջ մայրենի լեզուն հանդէս չի գա որպէս առանձին առարկա, այլ պիտի լինի կապակցուած միւս առարկաների հետ:

Երկրորդ խմբաւորման մէջ (կոնցենտրում) կոկոր-դեան գաղ որպէս առանձին առարկա, իսկ երրորդ խմբաւորման մէջ հանդէս կը ու իրեն ինքնուրոյն առարկա, ուս-կան հասարաւորութեան շափ կազ և ունչութիւն պահ-պահելով միւս առարկաների հետ:

Խոկատի ունենալով նպատակայարմարութիւնը, սու- յու ենք մայրենի լեզուի ծրագիրն առանձին և զատ միւս առարկաներից: Դասաւուին է վերապահուում յարմարեցնել ոչ ուսառարկաների հետ, կոող և յարակցութիւն ստեղծել որոնց մէջ:

Անհրաժեշտ ենք համարում շեշտել նաև, որ ինչպէս  
միւս առարկաների, այնպէս էլ մայրենի լեզւի ուսուցման  
հիմքը պիտի կազմեն երեխաների կատարած խմբական,  
աշխատանքները, որոնք պիտի օգտագործւեն մայրենի  
լեզւի դասերին թէ դպրոցի, թէ ընթերցանութեան յօդ-  
ւածների ընտրութեան և թէ բանաւոր ու գրաւոր շաբա-  
զրութեան նիւթի մշակման ժամանակ:

Այդ խմբական արտադրական աշխատանքը տեղի է  
ունենալու ոչ միայն արհեստների, այլ և գպրոցական-  
աշակերտական կեանքի և ինքնավարութեան բնագաւառ-  
ներում. օրինակ ներկայացում, ժողով, աշխատանքային (լաբորատորական) գրադմունքներ, գրադարանական աշ-  
խատանք, ըջադայութիւն և այլն:

## 2. Ն Պ Ա Տ Ա Կ

### Մայրենի լեզւի նպատակը պիտի լինի՝

1-Ար աշակերտը տիրապետի գրական բանաւոր և  
գրաւոր լեզւին:

2-Հասկանա գրական լեզուն՝ գրաւոր և բանաւոր:

3-Կարողանա կորդալ և ըմբռնել գեղարւեստական-  
բանաստեղծական և պարզ գիտական գրւածներ:

4-Նմանողական և ինքնուրոցն փորձերով բանաւոր և  
գրաւոր՝ ձեռք բերի գեղարւեստական իւրացման, այլ և  
ստեղծագործութեան ունակութիւն:

5-Սովորի գիտել և կարողանա ինքնուրոյն ընդհանրա-  
ցութեր և եղրակացութիւններ անել՝ մասնաւորապէս  
գրական խօսքի և գեղարւեստական ստեղծագործութեան  
շրջանում:

6-Ծանօթանա մայրենի գրականութեան գեղարւես-  
տական արտադրութիւններին և աշքի ընկնող գրողների  
կեանքին:

7-Սիրի մայրենի լեզուն և գրականութիւնը:

8-Վարժուի դործնական գրադրութեան, ժողովների

քարտուզարժութեան և պատրաստուի հասարակական գոր-  
ծունէութեան:

Բացի այս կէտերից, մայրենի լեզւի գասատուն պի-  
տի ի նկատի ունենա այն ընդհանուր խնդիրները, որ  
տուածալը ու աշխատանքային դպրոցը:

ա-Զարթեցնել, զարգացնել ու մշակել աշակերտի  
ինքնագործունէութիւնը:

բ-Զարգացնել խելացի և քննադատական վերաբեր-  
մունք գէպի շրջապատը և իրականութիւնը:

գ-Զարթեցնել և զարգացնել աշակերտի մէջ հասարա-  
կական ընտաղներ:

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ ԺՐԱԿԻՒԹ

### 1 ՄԱՆԿԱԳՈՐԾԻ ԶԱՐԴԻ ԲԱԺԻՆ (ՆԱԽԿԻՆ Ա. ԲԱ.Փ.)

1. Գպրոց նոր մանող երեխայի նախնական զբաղ-  
մունքներն են.՝զբօսանք, խաղ, ձեռարւեստ, նկարչու-  
թիւն, իրերի և նկարների դիտութիւն, ուսուցիչը խօ-  
սեցնում ու պատմել է տալիս աշակերտներին իրենց  
գիտցած փոքրիկ պատմութիւններ, հէքիաթներ, նրանց  
դիտածը, ապրածն ու լսածը: Այս աշխատանքները տեղի  
են ունենում գասարանում, բակում, պարտիզում, դպրո-  
ցում, անտառում: Աշակերտներն այդ պարապմունքի  
ժամանակ վարժուում են դպրոցական կեանքի կարգ ու  
կանոնին:

Այս պարապմունքների ժամանակ ուսուցիչը պիտի  
ձգտի աշակերտների խօսակցական գաւառաբարբառը մօ-  
տեցնել աստիճանաբար գրական լեզւին: իսկ այս նպատա-  
կին ուսուցիչը կարող է համել զործնական կեանքում-  
աշակերտների պատմելու և խօսելու ժամանակ ուղղելով  
նրանց գործածական գաւառաբարբառը:

2. Լեզւական նախապատրաստութիւն. — Աշակերտնե-  
րին ծանօթ փոքրիկ պատմութիւնից բղիւցնել օրինակելի

Նախագասութիւն, ապա սրանից բառ, վաճել, հնչիւն, հնչիւնների կապակցութիւն և այլն, բառը վերտծել հնչիւններից:

Տառերի էլեմենտները նկարել, նմանեցնելով զանազան իրերի: Առանց գրքի բերանացի անդիք անել և արտասանել ոտանաւորներ:

3. Կարղալ.—Անսխալ կարղալ երեխաններին մատչելի փոքրիկ յօդւածներ, որոնց միտքն ու բառերը կանխօրէն բացատրել, գործնականապէս օդաւելով իրազննական միջոցներից: Յօդւածի բովանդակութիւնը պատճել, կամ զիտելով ներկայացնել. նկարելով կամ կազապարելով արտայատել յօդւածի բովանդակութիւնն ամբողջովին կամ նրա այս կամ այն մասը, այս կամ այն անձանօթ բառը բերան անել հաւանած ոտանաւորը:

Փոքր խմբերում ցանկալի է և նպատակայարմար որ երեխանները լսեն ուսուցչի բերանից կենդանի խօսքը՝ նրանց հասկանալի մասնկական լեզով, գեղարւեսատական լաւ առաջանութեամբ: Այս աստիճանում ուսուցիչը պիտի խուսափի գրքից կարդալու ձեից:

4. Գրութիւն. —Գրատախտակից արտադրել աշակերտներին ծանօթ շատ վոքրիկ պատմութիւնն, նախադասութիւնն, բառ: Թղթից կտրտած, կաւից շինած և նկարած իրերի կամ գործողութիւնների տակ գրել անուններ, կամ գործողութեան տեսակը պարզել զրաւոր:

Երեխաններին գիտել տալ պատկերը և այդ գիտածը բառերով, նախադասութիւններով և նոյնիսկ փոքրիկ պատմութիւններով գրել տալ տետրներում:

Սովորական բառերը նախադասութեան մէջ գրել որպէս թերագրութիւն՝ ստուգութեան համար:

Գրել և կարդալու աշխատանքների հետկողուած խաղեր: Հերականութիւն. — Քերականութեան ընդհանրապէս պիտի նայել որպէս օժանդակ աղբիւը ուսուցչի համար, իր պարապմունքների ժամանակ դասի նիւթից բղիւեցնելով, պիտի օգտուի ուսուցիչը երեխաններին ծանօթացնելու բառի, բաղաձայն և ձայնաւոր (երկար ու կարճ ձայն ունեցող

տառեր) հնչիւնների, վանկերի (կտոր), տողագարձի, կետաղը թեառն նշանների, մեծատառի և փոքրատառի հետ: Բառերից կազմել նախադասութիւնն:

### ԱԹԱԶԻՆ ՏԱՐԻ (ՆԱԽԿԻՆ Բ. ԲԱԺ.)

1. Կարղալ.— Կարդալ դասազրքի յօդւածները ուղիղ, սահուն և գեղեցիկ, կարդալ համապատասխան ընթերցանութեան ղրքեր. անդիք անել սիրած ոտանաւորները: Յօդւածների միտքը պարզել, անծանօթ բառերը բացատրել զործնական կերպով, բովանդակութիւնը պատմել, նկարել, կազապարել, ներկայացնել (զրամատիզացիա):

2. Բանաւոր վարժութիւններ. — Ուսուցիչը զրադմունքի նիւթ է վերցնում՝ հէքիաթներ, զրոյցներ, կենդանական վէպեր կամ իրական պատմութիւններ, աշակերտական շրջապայութիւններ, նրանց տեսածները, լուսնները, գպրոցական և տնային պատահարները և աշակերտների կատարած աշխատանքները:

3. Գրաւոր. —Արտազրել զրտախտակից, տարւավերջը նաև գրքից (ձեռագիր) ամբողջական փոքրիկ պատմութիւնների, յօդւածների այս կամ այն մասերը: Սեփական աշխատանքի նկարագրը. պարզ նամակագրութիւն:

4. Քերականութիւն. — Գործնականորէն անցնելու համար ուսուցիչը ինկատի պիտի ունենա տարւաշնթացքում քերականութիւնից հետեւալը. նախադասութիւնից ջոկել բառերը. ծանօթ բառերից կազմել նախադասութիւններ. զաղափար տալ, որ բառերը ցոյց են տալիս տառերակա, յատկութիւն և գործողութիւն: Բառերի փափոխւած և անփոփոխ գրութիւնը (բառերի նոլովական փոփոխութիւնները և բառերի սկիզբը) առանց սակայն տերմինների զործածութեան, օրինակ զործ բառի անփոփոխ ձեն է զործ, փոփոխւած ձեր զործով, զործից և այլն: Այս բոլորը սակայն տարւաշնթացքում բղիւեցնելով անցած յօդւածներից՝ գործնականորէն:

## ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ (ՆԱԽԿԻՆ Դ. ԲԱԺ.)

1. Կարդալ.—Սահուն, կիտակցական և գեղեցիկ առողջապահութեամբ, կարգալ դասագրքի յօդւածները-յօդւածները դասարանում քննել այդ ահսակէտներից. կարդալ գերերով-խմբական ընթերցանութիւն։ Բովանդակութիւնը պարզել տրամաբանական կառուցւածքի տեսակէտից, կազմել ծրագիր բանաւոր և գրաւոր։ Պատմել յօդւածը նոյնութեամբ, դէմքը կամ գործողութեան ժամանակը փոփոխելով-մասերը պատմել ընդարձակելով կամ համառօտելով։ Յօդւածի բովանդակութիւնը նկարել, կադապարել թղթից կտրել, ներկայացնել։

Անգիր անել ոտանաւորներ ուսուցչի կամ աշակերտների աջակցութեամբ։

1) Ընթերցանութիւն. — Ընթերցանութիւն տանը կամ դասարանում. երեմն գպրոցում լուռ ընթերցանութիւնն է ԱՆԹՐՈՒԹԻՒՆ. — Այս լուռ ընթերցանութեան ժամանակ գործառը պիտի լինենք որ իշարը չգործադրւի այլ ձեզ ոչ ուսուցչի և ոչ աշակերտների կողմից, այլ նա ծառացի իր իսկական նպատակին։

Սովորել գործածել բառարաններ, կատալոգներ. ծառնօթացնել գրադարանի կազմութեան հետ և սովորեցնել աշակերտների գրադարանային գործավարութեան։

2. Զրոյց. — Զրոյցի նիւթ պիտի դառնան աշակերտների լուսածները, դիտածներն ու ապրածները, օրւա պատահանները, շրջագայութիւնները, գպրոցական տօնակատարութիւնները, գպրոցական ներկայացումներ, դիտածները, ծառնօթացանութեան գրքերը, եթէ ինարկէ բոլորին. ծառնօթ է զրոյցի ենթակա գիրքը. գեղարւեստական ազատ սահմանագործութիւններ (աշակերտների), հանելուկներ, պատմութիւններ և այլն։

3. Գրաւոր. — Աւղագրութիւն սովորելու համար արտագրել ձեռագիր բնագրից նախօրօք իւրացրած յօդւածներ, հարկ եղած գէպքում սովորած յօդւածներից երեմն կատարել նաև ստուգողական թելագրութիւն՝ անհրա-

## ԵԽԱՌ ՆԱԽԱՊԱՄՐԱՍՏՈՎԹԻՒՆՆԵՐԻՑ յԵԹՈՒ

Տալ նկարների, իրերի, երեսյթների նկարագիրը՝ անմիջական գիտողութիւնից յԵԹՈՒ։ Անձնական կամ դպրոցական աշխատանքների նկարագիրը (խաղեր, տօներ, սերկայացումներ, շրջագայութիւններ, փորձեր և այլ աշակերտական խմբական աշխատանքներ): Գրել շարադրութիւն շարադրական պատկերներից-երեխաների ապրածնութեամբ, ինքնուրոյն ստեղծագործած պատմութիւններից, երեմն նամակի ձեռվ։

Պահել յուշատեր. ալբոմներ, ուր գրում են երեխաներն իրենց դիտածները, կարգացած գրքերի համարած կտորները. արձանագրում են կարգացած գրքի անունը և հեղինակը. հաշւառութիւն արած աշխատանքների։ Գործնական գրագրութիւնը պիտի պարունակի տեղական պայմաններին համապատասխան նիւթ։

4. Զերականնութիւն. — Իբր օժանդակ նիւթ ուսուցիչն ինկատի պիտի ունենա գասերի ընթացքում, շաղկապւած անցնելիք յօդւածների հետ գործնականօրէն ծանօթացներու բառերի իմաստի հետ. նոյնանիշ, համանիշ՝ բառեր, պարզ, բարդ և ածանցական բառեր (նախածանց, վերջածանց-գործիշ, գործել, գործաւոր, անգործ)։

## ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ (ՆԱԽԿԻՆ Դ. ԲԱԺ. 1-ԻՆ ԴԱՍԱՐԱՐԱ)

Զրոյց. — Զրոյց տեսածի, դիտածի, զգացածի և զարգան հարցերի շուրջը, որոնք առաջանում են աշակերտի մէջ։ Դպրոցական-աշակերտական կեանքին վերաբերող ինքիրների քննութեան մասին զրոյցատրութիւնները պիտի տարւեն այնպիսի ձեռվ ու եղանակով, որ աշակերտները գործոն մասնակցութիւն ունենան, և զարկ տրվի նրանց ինքնազործունէութեանը։

Զրոյցի նիւթ պիտի դառնան գլխաւորապէս կանխօրէն կատարեած շրջագայութիւնները, երեխաների ապրածներն ու դիտածները, աշխատանքային գործնէութիւնը, դպրո-

ցական աշակերտական կեանքին վերաբերեալ հարցերը  
և տանն ու գասարամում ըոլորի կողմից կարդացւած զբքե-  
րի ապրբական վերլուծութիւնը։ Երջագայութիւնների ժա-  
մանակ գիտողութիւնները և այս ու այն վայրի կամ լնու-  
թեան որևէ երեսյթի ձանօթութիւնը պիտի ինի իր վայրուժ  
իր աեզրում։ Կանխօրէն նախապատրաստութիւն այս մասին  
աննպատակայարմար է։

Գրաւոր և բանաւոր շարադրութեան նախապատրաստութիւնը կատարել միևնոյն ժամին. Եթէ նախապատրաստում է միայն նիւթը և գրաւորը թողնում է յաջորդանգամին, այդ դեպքում աշակերար չպիտի գիտենայ, որ նախապատրաստութիւնն արւում է շարադրութիւն զրելու համար, որպէսզի աշակերար օգնութեան չգիմի ուրիշներին և չվտանգի իր ինքնուրոյնութիւնը: Զրոյցի դասերին պիտի վարժեցնել աշակերտներին օգտել զրադարանական ցուցակից, բառարաններից, վարել զառարանական զրադարանը:

Ընթերցանութիւն. — Խորացնել ու գունաւորել նա-  
խորդ դասարաններում ձեռք բերած փորձը-կարգալ պի-  
տակցօրէն և արտայայտիչ բմբոնելով կարգացածի իմաստն  
ամբողջովին:

Բնթերցանութեան տեխնիկայի զարգացմանը զարկ տալու նպատակով՝ պէտք է դասից 10–15 րոպէ նախրել աշակերտին, որ կարդա ինքն իրեն, կարգացած յօդւածը պիտի կարողանա մասերի բաժանել, վերնադիր տալ իւրաքանչիւր մասին. զանազանի էականը երկրորդականից և այսպիսով դասարանում կազմել յօդւածի նախագիծը (ալան), ուսուցչի օժանդակութեամբ։ Կարգացածը պատմել, համառօտել և ընդարձակել՝ զարգացնելով յօդւածի միտքն ըստ իր հասկազնութեան և երկակարութեան։

Առանձին ուշք գարձնել արտադասարանային ազտա  
բնթերքանութեան վրա:

Բոլորի կողմից կարդացւած զիրքը դարձնել գասա-  
րանում զրոյցի առարկա, որոշել զվահաւոր և երկրորդա-  
կան գործող անձինք։ Նշանակել յուշատեարունք զրքի նե-

զինակի անունը, վերնագիրը, դիմաւոր դործող անձն և  
ժամե եկած կառլները:

Ընթերցանութեան յօդածներն աշխատել, որչափ  
հսարաւորէ, կապել տարւած եղանակի և միւս առարկա-  
ների հետ։ Յօդւածի նիւթն իլիսարացիայի ենթարկել  
մատիառի թէ հատւածներով և թէ ամբողջովին։ Իլիւս-  
տրացիայի նիւթի ընտրաթիւնը թողնել աշակերտներին։

Անզիբ անել և արտասանել տալ ապրիքին համապատասխան գեղարւեստական տեսակէտից աշքի ընկնող արձակ և չափածո բանաստեղծութիւնները՝ ընտրութիւնը թողնելով աշակերտաներին: Մեծ ուշագրութիւն գարձնել գեղեցիկ արտասանութեան և շարժումների վրա: Գործող գութեամբ արտայայտել թէ ընթերցանութեան և թէ անդիբ արտասանած յարմար նիւթերը:

Կարգացած ու իւրացրած արձակ ու չափածո գլուխքները աշակերտներն իրենք պիտի կարողանան տարբերել միմեանցից, ուսուցչի օդութեամբ և զեկավարութեամբ:

Գրաւոր աշխատանքներ.—Գրաւոր աշխատանքներ  
պիտի լինին բազմագան և շօշափեն այն ամենը, ինչով  
հետաքրքրութեա է աշակերտը: Առաջնակարգ տեղ պիտի տալ  
սակագործական շարադրութիւններին, ինչպէս օրինակ՝  
անձնական յիշողութիւններ և ասպրամներ, գեղարւեատիկան  
պատկերների նկարագրութիւն, նամակագրութիւն և այլն:

Բացի սահղծագործական ազատ շաբագրությունից,  
երեխանները պիտի վարժւեն գըել.

1. Պարզ նկարագրութիւն.
  2. Պատկերների հիման վրա շարադրութիւն.
  3. Սեփական դիտողութիւնների արձանագրութիւն.
  4. Աշակերտական կեանքից, նրանց խմբական աշխատանքներից և շրջադայութիւններից աղատ թեմայով տւած շարադրութիւններ:

Շարադրութիւնը կարելի է զբել նախազծով (պլան),  
մասերի բաժանելով և առանց նախազծի, առաջին գէպ-  
քում՝ աշակերտաները դասարանում կազմում են նախա-

զիծը, ուսուցչի օգնութեամբ և ղեկավարութեամբ:

Յուշտեալի և ալբոմի գործածութիւնը շարունակւում է նաև այս դասարանում, նախակին դասարանի ձևով, սահայն այստեղ աւելի բովանդակալավից:

Քերականութիւն.—Դասերի ընթացքում իբրև օժանդակ նիւթ՝ գործնական կերպով անցնելու համար ի նկատք առնելուսուցաբանութիւն-գոյական անուն, թիւ և հորով. հորովումն նախադասութիւններով, թւական անուն, բայց, դէմք և թիւ, կանոնաւոր բայերի խոնարհումն՝ ներկա, անցեալ և ապառնի ժամանակներով սահմանական եղանակի շրջանում:

Շարանիւսութիւն—համառօտ և ընդարձակ նախադասութիւններ նախադասութիւնների վերլուծումն-ենթակա, ստորոգեալ, բայի լրացումներ և կողմնակի լրացումներ Այս ամբողջ զիտելիքները ըդխեցնել անցած նիւթից, սովորած յօդւածներից:

### ԶՈՐՈՐՈՐԻ ՏԱՐԻ (ՆԱԽԿԻՆ Հ-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)

Զորրորդ տարում ընդարձակելով և խորացնելով նախորդ տարիների դասընթացքները՝ պէտք է ուշք դարձնել մի նոր ինորի վրա-տուլ աշակերաներին գրւածքի գեղարւեստական կողմը տեսնելու ունակութիւնը. դա մի զօրեղ միջոց է զարգացնելու աշակերաների գեղարւեստական ձաշակը և սէր դարթեցնելու նրանց մէջ դէպի մայրենի գրականութիւնը:

Այս նպատակին պիտի ծառայեն զրոյցը, բացստրական, արտայայտիչ, տրամդասարանային ընթերցումը, գրաւոր աշխատանքները և գրական-երաժշտական երեկոյթները:

Զրոյց.---Զրոյցի նիւթ պիտի ծառայեն այն ամենը, ինչ որ երրորդ տարում, միայն պիտի աւելացնել եղածի վրա գրւածների տարրական գեղարւեստական վերլուծութիւնը. Երեխաների գեղարւեստական պատկերացումները

հարստացնելու նպատակով պէտք է ծանօթացնել նրանց գեղեցիկ, հարուստ և երաժշտական լեզվին, պատկերաւոր ուժ:

Բացի զրանից պէտք է ուշաղութիւն դարձնել նաև դաստիարակչական կողմի վրա՝ աշխատելով ընդլացնել աշակերտի աշխարհայեցքը և զարթեցնել նրա մէջ հասարակական բնազդներ, կոմունալ կեանքում կարգապահութեան անհրաժեշտութիւն և խմբական աշխատանքների ժամանակ համերաշխութեան, պատւի և պարտականութեան գգացում, աշխատանքի սէր և ընդհանուր շահերի գերազատութիւն անհատականի հանդէպ:

Օգտագործման նիւթ պիտի ծառայեն շրջագայութիւնները, աշակերտական աշխատանքները, անհատական և դպրոցական կեռնքն իր բազմազան երևոյթներով (ընդհանուր և խմբական ժողովներ և այլն). մի խօսքով՝ այն ամենը, ինչ որ նախորդ դասարանում՝ աւելացրած գեղարւեստական աշքի ընկնող զրւածքների վերլուծութիւնը.

Ծանօթութիւն տալ ժողովներ վարելու, նախագահի և քարտուղարի պարտականութեան և իրաւունքների ու բանաձեռի մասին:

Ընթերցանութիւն.---Ընթերցանութեան մեխանիզմը զարգացնելու հետ միասին ուշք դարձնել նաև գեղեցիկ արտասանութեան (գեղամացիա) վրա, որը մեծ զարկ կտա աշակերտի գեղեցկի ձաշակի զարգանալուն: Այդնպատակով պիտի ընտրել գեղարւեստական խոշոր արժեք ներկայացնող բանասեղծական գրւածքներ՝ արձակ և չափածու: Գեղա-հոգեբանական տարրական վերլուծութեան զիմելու տեսակէտից անհրաժեշտ է տալ կարգալու ամբողջական, լրիւ պատմւածքներ և վէպիկներ թէ դասարանում և թէ ատմէր: Փաղափար տալ տիպի մասին և օգնել, որ աշակերտը կարողանա ընդհանուր գծերով արտայայտել հերոսի կամ զլիքաւոր տիպերի ընութագրութիւնը (ընտրութեան զլիքաւոր գլխաւոր գծերը), պատմւածքը բաժնել մասերի, որոշել էական և երկրորդական կտորները, պատմել բովանդակութիւնը՝ համառօտ և ընդարձակ: Տալ հեղինակային պատկերացումները

Կի կենսագրութիւնից համառօտեն էական տեղեկութիւններ։ Տարւա երկրորդ կիսից աշակերտները պիտի կարողանան ինքնուրոյն կերպով, առանց ուսուցչի օգնութեան կազմել կարգացածի նախագիծը (պլան)։

Յուշատերն այս անգամ մեծ դեր պիտի կատարի աշակերտի համար, գեղարւեսական աշքի բնկնող կատարներ, գեղեցիկ սճեր պիտի արտազրւեն յուշատերում, նաև ներսոի բնաւորութեան զիսաւոր գծերը։ Յուշատերի գործածութեան նետ պիտի շարանակւեն նաև միւս վարժութիւնները՝ մատիտով իլլիսարացիա կարգացածից, տեսածից, վերազրումներից, զործողութիւններիներկայացում (ինցենիրուվիկա)։

Դրաւոր աշխատանք. — Նախորդ տարւայ գրաւոր աշխատանքների նիւթերն օգտագործել նաև այս դասարանում, քիչ աւելի բարգացրած ձևով։ Բացի զրանից դրեւ տալ նաև պարզ բնութագրութիւններ (զործող անձի բնաւորութեան զիսաւոր գծերը). Ինարկել ամեն կերպ աշխատել զարգացնելու աշակերտի ստեղծագործական ողին տալով մեծ մասամբ ազատ շարադրութիւններ. — արձակագրել բնութեան և երևոյթների գիտութիւնները, շրջագայութիւնների ժամանակ ստացած տպաւորութիւնները, աշխատանքային պրոցեսները, անձնական լիշտութիւնները, զգացածը, ազըռումները և այլն։ Գեղարւեսական բացիկի, տեղի և առարկայի նկարագրութիւն։

Ենթադրելով, որ չորրորդ տարւա աշակերտները մասնակցել են գալրոցական ինքնավարութեան օրգաններում, պիտի վարժեցնել նրանց մասնակցելու գլուխական կոռուպայի գրագրութիւններին-զործագարութիւն, հաշվառութիւն, ժողովների արձանագրութիւն, զեկուցումն զպրացական բնթացիկ գործերի, շրջագայութիւնների մասին բանաձեռք, գործնական գրագրութիւն զանազան հիմնարկութիւնների նետ և այլն։

Քերականութիւն. — Բառակազմութիւն-լրացնել և ամբողջացնել գործածական ածանցներ. ստուգաբանութիւն-

գերանուն, տեսակները և նոլովումն. բայցերի եզրնակները, կանոնաւոր բայցերի խոնարհումն. Շաբահիւսութիւն-բարդ նախագասութիւն. Ըստարձակ նախագասութեան վերլուծումն. Պարզ նախագասութեան շարահիւսութիւն. — ենթակայի և ստորոգեալի համաձայնութիւն։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ-Կենդանի լեզվի համար մեծ արժեք չունեն քերականական կանոնները. այս դասարանում ևս, ինչպէս և միւս գասարաններում ուսուցիչը պիտի օգտագործի ծրագրում գրւած նիւթերը զործնականորէն, յօդւածուերն անցնելու ժամանակի. Վերջին գասարանին միայն պիտի թողնել քերականութեան. նետ տարրական ձևով գործնականորէն ծանօթանալու նրան գիտելիքներին։

#### ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ (ՆԱԽԿԻՒ Յ-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ)

Նախորդ գասարանում ստացած գիտելիքներն այս ավելի պիտի ամբողջանան ու լրանան։ Իրա վրա պիտի աւելացնել նայի այն, որ այս տարում աշակերտութիւնը պիտի ծանօթանա չափազանց տարրական ձևով բանահնութեան տեսութեան և օտար գրականութեան արձեքաւոր նմուշներին։

Սյստիտով աւելի պարզ և յստակ հասկացողութիւն կունենա աշակերտը գրւածքի. գեղարւեսականութեան յասին և աւելի պատրաստ կինի գեղահոգերանական վերլուծումների. Պէտք է ամեն կերպ բարոյագիտական վերլուծումները քննական վերաբերմունք ձեռք բերեն զէպի կարգացածը, դէպի Մշակութական կեանքը։

Զըսց. — Սովորած գրւածների վրայ հիմւած, աշակերտները պիտի կարսցանան զանազանել զեղարւեսական կան և զիտական նկարագրութիւնները միմեանցից։

Աշակերտները սովորած և խրացքած նիւթերից պիտի կարողանան գուրս բերել նկարագրական և պատմողական տարրերը։ Աշակերտներն իրենց իրացրուծ գրւածներից շարունակում են կազմել բնութագրութիւններ և հասկա-

ցողութիւն են ձեռք բերում քննադատութեան մասին նոյն ձեռվ գործնականապէս սովորում են գրւածների տեսակները—պրոզա և պօէզիա, պօէզիայի տեսակները—վիպական, քնարական և զրամատիքական:

Իւրացըած նիւթերից ինքնուրոյն կերպով աշակերտները ծանօթանում են լեզւի, ոճի, արձակ ու չափածո խօսքի առանձնայատկութիւններին, Գրւածների ընթերցանութեան ընթացքում գաղափար են կազմում պատկերաւոր ոճի, փոխաբերութեան, այլաբանութեան, չտփազանցութեան և համեմատութեան մասին:

Եարժւնակւում է սովորած գրւածների տարրական գեղա-հոգեբանական վերլուծութիւնը, աչքի ընկնող գրողների կենսագրութիւնը:

Զրոյցի նիւթ է դառնում նաև դպրոցական-աշակերտական կեանքը.—զեկուցումն. աշակերտներին պիտի վարժեցնել ուսուցչի օժանդակութեամբ նրանց համար շատ մատչելի նիւթի շուրջը կենդանի խօսք արտասանելու կարողութեան մէջ:

Ուսուցանել նախագահութիւն, քարտուղարութիւն, գործակարութիւն, տեղական պայմանների համապատասխան գործնական գրագրութիւն. ծանօթութիւն զրադարանական գործի հիմունքների և նրանց գործնական կիրառման:

Վիճակագրութեան տարրական ծանօթութիւն.—գրադարան յաճախողների և գուրս տւած գրքերի վիճակագրութիւն:

Օգտագործումն զանազան տեղեկատու գրքերի—հեռախօսային ցուցակների, բառարանների. Գրական-երաժշտական երեկոյթ-ցերեկոյթ. ներկայացում:

Բացի յիշեալներից զրոյցի նիւթ կարող են դառնալ կեանքն իր բազմազան երեսյթներով, աշակերտական աշխատանքները և աշակերտների՝ իրենց յարուցած հարցերը—վարոցական կողեկտիւի, հասարակական և պետական կեանքից.—Իլիւստրացիա և զրամատիքացիա:

Հայերի և նրանց հարհան ժողովուրդների կեանքը և փախյարարերութիւնը:

Ըսթերցանութիւն.—Այս տարում աշակերտների ընթերցանութեան տեխնիքան նորանակելին հասած պիտի լինի և պակաս կողմեր չունենա, ընթերցանութիւնը պիտի լինի դրտակցական, արտայացատիչ և գեղեցիկառողանութեամբ: Նոյնը պիտի առել նաև արտասանութեան նկատմամբ:

Կարգացածը ոչ միայն պիտի կարողանան աշակերտները խորապէս բարեներ և կանոնաւոր արտայացանի ոյլ պիտի կարողանան ցոյց տալ գեղարեսատական կողմերը, մեր խօսքով օգանգործեն զրոյցի զատին բանահիւսութեան տեսութիւնից ձեռք բերած առրրական գիտելիքները ըսթերցանութեան ժամանակ պիտի վարժեն անհրաժեշտ քաղաքածքները անել, ցիտաներ ընտրել և նարցեր կազմել: Պէտք է վարժեն անուայթոք խօսելու, կենզանի մեր Պէտք է վարժեն անուայթոք խօսելու, կենզանի մոռք արտասանելու որեւ և նիւթի մասին, նկարազրելոր է առարկա կամ երեսը:

Նախորդ տարւա վարժութիւնները պիտի շարունակ ան աւելի բարգացած ձևով:

Գրալոր աշխատանիր.—Նկարազրել տարրեաները, պատկերները, բնական երեսյթներ, հին շնորեր, տօներ, հանգեներ, սովորութիւններ և այլն: Բնութագրութիւն զանազան ախողերի: Ազգագրական-անտեսական պարզ նկարագրութիւն: Բնապատճական հետազոտութիւն, պատմական զիտազութիւնները բառ անզական աւանդութիւնների, յուշաբաններ, եթէ կան: Ինքնուրոյն գեղարեսատական վարդեր ստեղծագործական ողին զարգացնելու նպատակով, ինչպէս նախորդ զատարանում, կիրառել գործում տառչարկած շարադրութեան նիւթերը:

Զեկուցութեր, բանաձեր, հաշիներ, գորրոցական-աշակերտական կեանքի ընթերցիկ և այլ ինդիվիների մասին:

Յօւածներ և բարեր զպրոցական թերթին: Պարզ պրախոսական և քննադատական փորձեր: (Նիւթը բաւական բարզ է և բազմուզան, ուսուցչի

անձնական յատկութիւններից է կախւած բովանդակ կերպով օգտվելու այս նիւթից):

**Քերականութիւն.** — Տարրական կերպով այս գասարաշնում պիտի արքի և կրկնուի նախկին գասարանների ամբողջ անցումը, անշաշտ բռնըրը տառ յօգւածների գասարանդման ընթացքում գործնականորէն մատչելի դարձնելով և բախեցնելով իւրացրած յօգւածներից քերականութեան անհրաժեշտ զիսելիքները, որոնք պիտի նպաստեն զիսաւորապէս ու զգապութիւն և լեզուի առանձնայատկութիւնները իւրացնելուն: Առանձնապէս կանդ պիտի առնենք այսուհետ բայերի (զործոգութիւնների), ենթակայի և լրացցիչների վրայ կրկնել անցածը, խորացնել ու ամբողջացնել քերականութիւնից այն ամենը, ինչ որ հարաւոր է գործնականորէն ուսուցանելու աշակերտներին և նպաստելու նրանց լեզուի զարգանալուն:

### ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՅՈՒՄՆԵՐ

Մայրենի լեզուի զասերը պիտի բաժանել զրոյցի, ընթերցանութեան, բացարարութեան և պատմելու, քերականութեան, զրաւոր աշխատանքների և այդ աշխատանքներն առզերութեան:

Աւսուցչին է վերապահում այդ առանձին բաժինների զանուորութիւնը, — ամբողջ զաս յատկացնել իւրաքանչիւր բաժին-բացի քերականութիւնից, որն առանձին առարկա և առանձին զաս չպիտի լինի-թէ զատի մի մասը միայն, այս խնդիրն էլ թողնուում է ասուցչի հայեցազութեանը: Միայն պիտի աշխատել, որ այդ բաժիններից և ոչ մէկն աշխաթող չարեն:

Զրոյցի զան աշխատանքային գպրոցում առանձին կարեւութիւն է ներկայացնում և յատուկ աշխատանք է պահոնչում ուսուցչից: Զրոյցը ոչ միայն նպաստի պիտի աշխատել աշակերտի բառամթերքը, ուզգի նրան

զաւասարարատից գէպի զրական լեզուն և սովորեցնի աղատ արտայայուելու և կոմ զանուզան զիտելիքներ տալեզուի, բահանհիսութեան տեսութեան և զրականութեան շրջանից, այլ և գործնական վարժութիւններով պիտի մօտեցնի նրանց շրջապատող կեանքին, ընդլայնի նրանց մտաւորաշարհայեցքր, լարգացնի նրանց սոցիալական բնագդները և օգտարատի նրանց որպէս սոցիալական հանրապետութեան քաղաքացիների: Այս տեսակետից ենելով ուսուցիչները պիտի նետի կիրառել այն վարժութիւնները, որոնք յայտարարւած են իւրաքանչիւր խմբի գաներին:

Զրոյցի ժամանակ ուսուցիչը պիտի լինի շափազանց սակաւախու և խուսափի զասին զաղմատիկ բնոյթ տալուց:

Աշտկերար պիտի խօսի, զատի, եզրակացութիւններ հանի, ընդհանրացումներ անի, քննի, քննուզատի, ուսուցիչը պիտի օգնի և աննկատելի կելքով զեկովարի: Այսպիսով կարելի կլինի տառջ քաշել աշակերտի ինքնակարձունելու թիւնը, ստեղծագործական ողին, միւս կողմից՝ ուսուցողի այցպիսով հարաւորութիւն կունենա ճանաչելու ոշակերտին, նրա անհատական առանձնայատկութիւնները, ընտւորութեան լու և վատ կողմերին ու հակումները: Սակայն այդ չի նշանակում, որ անսիսակամ և պատմական բնոյթ պիտի կը զատը, ուսուցիչն աշուլուրչ կերպով պիտի նետի զասի նպաստակին և զանցումն առլով աշակերտների հարցաւիրութեանը՝ միշտ ուզգի նրանց զէպի իր որոշած նպաստելը:

Զրոյցի նիւթը պիտի աշակերտներին հետաքրքրի և շահաւետ լինի զործնական և կամ զիտելիքներ տալու ենակելատից: Նա պիտի նիւթի շրջապատող կեանքին, աչուկերտների աշխատանքների, նրանց ինքնակարձութեան վրա և յատիս էլ սերա կապ պիտի առնենա միւս տառկաների-ընտական գիտողութիւնների, հայրենագիտաւթեան, երբեմն էլ ձեռարւեստի ու նկարչութեան նետ:

Գրական երեկոյթ-ցերեկոյթ, ներկայացում, ժողով, զործակարութիւն, զրակարանային գործ, զանազան

ունկեկասու պրիերից քառարաններից օգտակարություն ցա մն և այլն պիտի շաբանակ օգտագործեն զրոյցի ժամերին, մինչեւ որ աշակերտներն ունակութիւն ձեռք բերեն դորձնականորէն վարելու այդ զորձերն ու ապագա քաղաք քարտոցիական պարտականութիւնները:

Ըսթերցանութիւն.—Նախան յօդւածի ընթերցանութիւն անցնելի պիտի զրոյցի դասին նախաօգտաբառակալ առանց գժեաբութեան համականալու յօդւածր-աշակերտները պիտի կարողանան կարդալ յօդւածը զիտակցօրէն և տուգանութեամբ:

Յօդւածի ընթերցանութիւնը շատ չպէտք է կըկնել տոլ և պիտի խուսափել ձանձրոյթ պատճառելուց: Այդ ապատակով երեմ-երեմ անհատական ընթերցումից պիտի անցնել խմբականի, երեմն էլ տուաջարկեր որ 10-15 ըուղէ աշակերտները կարդան յօդւածն իրենց մտքում կամ անլուկի ձայնով:

Հոկել, որ այս աշխատանքը կառարուի և ձառայի իր հոկտեմբեր նովատակին:

Յօդւածները պիտի համուպատասխաննեն մանկան հասկին և համակացողութեանը, լինեն հետարրիք և պիտանի՝ զեկորեաստական և մարզափրական զգացմունք և սոցիալական բնուգդներ զարգացնելու սեռակետից:

Առաջին երեք առրին զառապատճենը հարաւորութեան առնանում, ի նկատի ունենալով հետեւալ բաժինները՝ նիւթը պիտի զառաւորեն առաւտ եղանակների համապատասխան, մարդ և հայրենիք, հերիտիթներ և առասպելիներ, սերտ կապ պահպանել ընազիւութեան և հայրենագիտութեան համապատասխան նիւթը պիտի առաւտ առաջնորդեն և մասնաւոր նիւթը պիտի և մասնաւոր նիւթը պարզ մասին:

Առանաւորները պիտի լինեն բացառապէս զեղարշանական-բանական զարդարութեան դամական գրադարանութեան վրա առանձին ու շը պիտի զարձնել:

Առանաւորները անցնելու ժամանակ աշակերտների

վրա զեղարւերտական և ամբողջական տպաւորներին թրմնելու համար նպատակայարմար է նոյն ժամեն բաւականութիւնը գտանալուորի նախապատրաստութեամբ և տանաւորը սալովի, զարձորդ դատերին թողնելով, եթէ կարիք է զգութ ուսուցիչը պատմել տաքու ստանաւորը, սակայն պատմելով: Ժամանակակի հարաւորութեան չափով օգտականութեանը բառամթերքից և վերջաւծելու ուսանուորը, առանձին ու շը պիտի դարձնել, որ այս աշխատանքների ժամանակ չնաև մանա ստանաւորի գեղարւեստական արժէքը: Անզիր անել և արտասանել տալ նաև արձակ բանաստեղծութիւններ:

Դրաւոր աշխատանք, — Դրաւոր աշխատանքները մեծ մաժամբ պիտի կատարանում, երբեմն միայն տանը:

Դրաւոր աշխատանքների ժամանակ անհրաժեշտ չէ, որ աշխակերտը շարադրութեան սկզբին կամ վերջում գրւած ունենա իր գրելիք նիւթի նախագիծը (պլանը), բայց նա պէտք է իր համար կանխօրէն պարզած և որոշած լինի իր գրելիք նիւթի մօտաւոր յաջորդականութիւնը-թէ՝ ինչպէս պիտի սկսի, ինչը պիտի յաջորդի և ինչպէս պիտի վերջացնի իւր նիւթը: Այս ձեզ աշակերտների մէջ զարգացնում է մի կողմից գիտակցական վերաբերմունք դէպի գրաւոր աշխատանքները և միւս կողմից՝ վարժեցնում է նրանց որևէ նիւթ յաջորդական կերպով մշակելու գործում: Շարադրութեան նիւթը շատ ժամանակ չպիտի լսի և յօդնեցնի աշակերտներին: Մինչեւ գրելը նիւթը պիտի մշակվի զրոյցի դասերին:

Յաջուղած նիւթը (մանաւանդ ազատ շարադրութիւն) կարդալ դասարանում և քննութեան նիւթ դարձնել թէ ձեի և թէ բովանդակութեան աեսակէտից: Սխալներն ուղել դասարանում ամբողջ դասարանի գործօն մասնակցութեամբ:

Թէ ինչ նիւթ պիտի ունենան շարադրութիւնները, այս մասին ցուցումներ կան նախորդ գլուխներում:

Քերականութիւնն. — Քերականութեան գասադիրք չպիտի տրւի աշակերտներին. նա չպիտի նկատւի որպէս առանձին առարկա, այլ պիտի անցնել յօդւածների ճետ կապտկցւած։ Քերականական օրէնքներն ու կանոնները տառած նիւթից—յօդւածից իրենից պիտի հանեն աշտկերտները ուսուցչի ղեկավարութեամբ. քերականութիւնը պիտի դառնա աշակերտի ինքնուրոյն դիտողութիւնների և եզրակացութիւնների մի շարք՝ իրեն ծանօթ լեզւի և երեւոյթների շրջանում։ Քերականութեան դոգմատիկ կողմը պիտի հնարաւորութեան չափով կրծատւի և հասցնելի մինիմում աստիճանի։

Ստուգարանական և շաբահիւսական կանոնների դուրընթացաբար անցնելն ու նիւթի դասաւորութիւնը թողնըը ում է ուսուցչի հայեցողութեանը։



